

19.9.84

ԲԱՆՎ.-ԳՅՈՒՂ. ԳԵՂԱՐՎԵՍ. ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՆՈՒՏ

ՅԵՐԿՈՒՅ ՊԱՏՄՎԱԾՔ

891.99  
W-64

ԳԵՂԱՐՎԵՆ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ԹԱՐԱՐԻ

ՏԵՐԵՎՈՆ - 1928

891.99

20 APR 2006

Ա-6կրակական լուսվորութեան

№ 9      ፩ ሃ አ ቤ ብ የ ሃ ቤ የ የ የ የ የ

Nº 19 NOV 2010

ԲԱՆԳ-ԳՅՈՒՂ. ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՆՈՒՅ

18

*See also* [SUVs](#)

*July 1863*

Ch. III

Digitized by srujanika@gmail.com

61  
Bogot, Colombia  
Bogot, Colombia

for which the  
good people


ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

3 b 0 b 4 u u

1928

13.02.2013  
0001984

19984



3253 - 84

## ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՀԻՆ

(Գլուղական կյանքից)

I

### ՍԱԲՈ ԱՊԵՐԸ

Տասը տարեկան Պետիկը, լույսը բացվելուն  
պես, գոմից վազեց մոր կուշտն ու հեկեկալով  
ասաց.

— Զե, չե, վոչխարները յես հանդը չեմ տա-  
նի, ինչու Գիքորն ուսումնարան ա զնում՝ յես  
չե։ — Ու ձայնը խեղդվելով գլուխը թաղեց մոր  
գրկում։

Շուշանն զգում եր, վոր նրա գանգատը  
իրավացի յե, ամա դե սրտի նեղությունից մեկ  
բարկանում եր յերեխի վրա, մեկ ել նրա գլու-  
խը շոյելով համոզում։

— Բալա ջան, Գիքորի բանը ուրիշ ա, նրա  
հերը՝ Սաքո ապերը, հարուստ ա։

— Ի՞նչ անեմ, ինչ ա, Գիքորը միշտ ձի ա  
նստում, համ ել Սանամ ձալոն թաքուն նրան  
ձվացեղ ա ուտացնում, գու գիտաս, յես չեմ  
տենա…

Շուշանը շվարած մնացել եր և չգիտեր,  
ինչպես միսիթարի վորդու գազազած սիրտը։ Են  
որից, վոր ամուսինը պատերազմում անհետ կո-

բել եր, իր դարդը հալելմաշել եր նրան. մյուս  
կողմից յերեխի լացը-հեկեկանքը մղկտացնում  
եր նրա մայրական սիրտը:

Դու, Պետիկ ջան, պետք ե մորդ քոմակ  
լինես, են մի կտոր հացը, վոր ուտացնում ա  
մեզ Սաքո ապերը, մեր գլխին հարամ կանի,  
յեթե ձեռներս ծալած նստենք: Եսպես ջանով-  
դուրբանով մորը հաջողվեց վորդուն մի կերպ  
համոզել:

Շուշանի աղջիկը՝ ութ տարեկան Աստղիկը,  
վոր արգեն մեկ անգամ աղբյուր եր գնացել-  
յեկել, հանկարծ ջնչասպառ ներս վաղեց, յերեսի  
գույնը գցած գոռաց.

— Մայրիկ, մայրիկ, Սաքո ապերը Պետի-  
կին ծեծում ա... Շուշանն եղ լսելուն պես,  
խելքը կորցրածի նման շտապեց դեպի բակը և  
լինչ... Են յեքա մարդը պստիկ Պետիկին վու-  
ների տակ գցած՝ իրար յետեից քացիներ և  
տալիս ու հայհոյանքներ թափում.—Այ շան  
լակուտ, որը կես յեղավ, դու հիա նոր ես զարթ-  
նում քնից: Պետիկի մայրը սիրտ չեր անում  
մոտենալ. տեքը շատ փիս եր բարկացած:  
Բայց վորդու լացը, նրա սիրտը կտոր-կտոր եր  
անում: Տանեցիք դիմն ել գիտեյին Սաքո ա-  
պոր խասյաթը և զրա համար վոչ մեկը չեր  
վստահանում ծպտուն հանել, թեկուզ պստիկին  
սպաներ:

Սանամը՝ Սաքոյի կինը, դրսի աղմուկը  
լսելով գուրս վաղեց ու կարծես ուրախացած  
ասաց.

«Հախն ե, ինչո՞ւ ուշ ե վեր կենում քնից.  
հերիք չի յերեք հոգու կերակրում ե հորեղբայ-  
րը, հիա քթների տակ մրթմրթում են, յերբ մի  
գործի յես դնում:

Սուաջին անգամը չեր, վոր Սանամը Շու-  
շանի յերեսովն եր տալիս... Շուշանը լուս, աշ-  
քերը սրբում եր գոգնոցի վեշերով ու միշտ  
լուսմ. «Ինչ անեմ, իմ բախտն ե, վոր ընկել եմ,  
պիտի տանեմ», — մտածում եր նա:

Կատաղած Սաքո ապերը, վորսի պես, Պե-  
տիկին իր վուսների տակ գցած՝ ել իրեն հաշիվ  
չեր տալիս, թե վորտեղին ե խփում: Հանկարծ  
Պետիկը ճիչ արձակեց և ուշաթափ գետին  
փովեց: Արյունը ճակատից դուրս պրծավ, Սա-  
քոն հետ-հետ քաշվեց, մոր աչքերը մթնեցին,  
խելազարի նման վրա վաղեց ու զըկեց վորդուն:

Հուրը գնա», — դրսից լսվեց Սանամի գոռող ձայնը, Աստղիկն եղ ձայնից սարսափած իսկույն վեր ցատկեց տեղից, աչքերը լի արցունքով փարվեց մոր վզով. «Վախում եմ, չեմ գնա, Սանամ ձալոն ինձ կթակի»: Շուշանը չեր լսում աղջկա աղաչանքը:

«ԶԵ, չե, չեմ գնա, վախում եմ», — անդադար կրկնում եր նա, Արցունքների կաթիները հոսում եյին նրա այտերից, իսկ մայրն ընկել եր ինքնամոռացության մեջ և վոչ մի ձայն չեր հանում: Այդ միջոցին Սանամը նոթերը կիտածներս մտավ սրահ.

— Լավ լակոտներ ունիս ելի, Շուշան բաջի, — քմծիծաղ սկսեց հեգնել Շուշանին, — աշխատանքը դրսում մնացել ե թափված, իսկ դու՝ ձեռներդ ծալած յեկել, նստել ես:

Շուշանն սթափվեց Սանամի ձայնից: Նաշատ եր լուել, բայց եսոր նրա սիրար չափից դուրս զայրույթով լցված եր, ել չկարողացավ իրեն զսպել:

— Հերիք ե, ձեր հացը ձեր դլխին լինի, սաղ ըլի ջանս: Ես աշխատանքն ում համար անեմ մի կտոր հաց կճարեմ: Սանամը հասկացավ Շուշանի միտքն ու ձայնը քիչ մեղմացրեց:

— Ու՞ր ել վոր գնաս, ելի վերջը երեխեքը Սաքոյի ջանին են մնալու. լավ կլինի ենպես սովորացնես, վոր մեծերի խոսքից դուրս չգան:

— Ո՞ձի բերանը, ինչքան ել ուզենաս փափուկ լեզու դնես, ելի նա ո՞ծ կմնա. Նրա ոլուխը պիտի ջարդես, վոր ել քեզ չկծի... Տեղերկնկա խոսքերն ասեղի պես ծակեցին Սանամի սիրաը:

— Սաքոյի հախն ե, վզակոթներին տված, դուրս արած պետք ե լիներ, վոր եսորվան որը լեզու չքացանեյիք մեզ վրա — ինքն իրեն մըրթմըրթալով՝ Սանամը չոքեց կովերը կթելու:

## II

### ՇՈՒՇԱՆԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Տղամարդիկ վաղուց եյին հանդից վերադարձել:

Սաքո ապերն իրիկնահացը կերավ, ըստ իր սովորության գնաց մեկել ոթախն ու թեքն ընկավ բարձին.

«Աղջի՛ Շուշան, վեր կաց վոտնամաններս հանի», — բղավում եր նա պառկած տեղից:

Սանամը, վոր եղ միջոցին հացատանը յերեխաներին եր կերակրում, մարդու ձենը լսելուն պես, ձեռքերը դեյրի փեշերով սրբելով վազեց:

— Այ մարդ, տեսամը քո աղբոր կնիկն ինչ անզգան ա յեղել. ել չի ուզում մեզ հետ ապշել. հալբաթ աչք դրած մարդ ունի, ուզում արել.

մարդու գնալ: Ու Սանամն սկսեց ելի բամբա-  
սել Շուշանին:

—Գլուխը քարին ա տվել, զոռաց Սաքոն,  
մի ձեն տուր, թող գա տենամ...

—Ե՛, յես գործ չունեմ, եղ քո բանն ա,—  
ասաց Սանամն ու մըթմըթալով դուրս գնաց:

—Գիքոր, դուրս գնա Սանամին կանչիր՝ մի  
եստեղ գա:

Շուշանը յեկավ՝ գունատ, մոայլ, աչքերը  
կարմրած, դուն մոտ լուռ կանգնեց ու ձեռ-  
քերը խաչ արավ: Սաքոյի քթի պնչերը յենում-  
իջնում եյին, դեմքը թթվացքել եր հարսի վրա,  
կատաղությունից փոնչում եր. «Ժաժ արի տե-  
ղիցդ, վոտնամաններս հանի», —գոռաց նա:

Եղ կատաղի ձենից Շուշանի սիրտը մի  
դող ընկավ, բայց ելի տեղից չշարժվեց...

—Չես լսում, քեզ եմ տսում, —ել ավելի  
զոռաց Սաքո ապերը: Շուշանն եաբան տարվա  
հարս եր, բայց տեղոր հետ դեռ չեր խոսել,  
եսոր սիրտ արավ.

—Սաքո ապեր, իմ վարբերի հասանելիք փայը  
տուր, յես ել չեմ ուզում ձեզ հետ նստել...

Սաքոն հարսի անսպասելի խոսքերից զայ-  
րացած վեր թռավ տեղից, ձեռքերը մեջքին  
գնելով, ոթախի մեջ վարջիս տալով դարձավ  
դեպի հարսը:

—Ի՞նչ, ի՞նչ, եղ ով ե եղ լեզուն քո բե-

րանը դրել, դե՛, շնորհ կորիր, վոր աչքիս չերե-  
վաս...

Շուշանը տեղից չշարժվեց. պետք ե ամեն  
ինչ վերջացնել, վորոշել եր նա:

—Ինչով ուզում ես, գնա կերակրիր յերե-  
խեքիդ, վոչ մի ստանալիք չունես ինձնից.  
կտրուկ պատասխանեց Սաքոն:

Տեքոր պատասխանից Շուշանի մարմուկ  
մի դող անցավ... լոեց, բայց յերեսը շուռ տվեց  
ու վճռական բայլերով դուրս յեկավ ոթախից:

### III

## ՀԻՆԸ ԳԱՆԴՎՈՒՄ, ՆՈՐԸ ԾՆՎՈՒՄ Ե

Շուշանը թոնի առջև նստած կերակուր եր  
յեփում: Տղան՝ Պետիկը ներս մտավ.

—Տեսնո՞մ ես, ա մեր, Սաքո ապերը նեղն  
ա ընկել, ինձ կանչում ա, վոր գնամ տավարն  
արածացնեմ: Ուզում ա գործը տնավարի յոլա  
տանի. թող լավ խմանա, վոր յես իր ասած  
տղեն չեմ:

—Թող ջանը գուրս գա. անջախ սովորել ա  
դիմին ել խաբել, պլոկել. ես ե մեր պահանջը,  
եստեղ բարեկամ, խաթր չկա...

Եղ խոսակցության ժամանակ ներս մտավ  
Շուշանի աղջիկ Աստղիկը.

—Մալրիկ, խորհրդի նախագահը քեզ կան-  
չում ա:

—Դե են ժամանակ, բալես, թոնըին մտիկ  
արա, գնամ տեսնեմ ի՞նչ ա ասում, հրես կդամ,—  
ասաց Շուշանն ու գնաց դեպի գյուղխորհրդի  
նախագահը:

—Շուշան, ես ընկերը, անունն Արփիկ ա,  
յեկելա մեր գեղը դելեզատ (պատգամավորուհի)  
ընտրելու: Ես գիշեր թող ձեր տանը մնա, եգուց  
մի տեղ կդանենք,—դիմեց խորհրդի նախա-  
գահը Շուշանին,

—Աչքիս վրա տեղ ունի, թող գա, —ասաց  
Շուշանն ու Արփիկի հետ միասին տուն գնացին:

Իրիկուն եր. գյուղն արդեն մութը կո-  
խել եր, իսկ խրճիթ-ընթերցարանում կյանքը յե-  
ռում եր: Աղոտ լույսի տակ, սեղանի մի ծայրին  
մի քանի կոմսոմոլիստներ նստած՝ գաղեթ եյին  
կարդում. մյուս ծայրին ել Պետիկը յերկու ըն-  
կերներով «Կոմսոմոլի ձայն» պատի լրագրի հա-  
ջորդ համարն եր արտագրում:

Եստեղ եր և կոմսոմոլիստկա Ատիկը, վոր  
խրճիթ-ընթերցարանի մի անկյունում «գեղջ-  
կուհու անկյուն» եր պատրաստում:

—Ընկերներ, ժամանակ է խրճիթը փակե-  
լու, ուշ ե արդեն,—ձեն տվեց վարիչը:

—Հինգ րոպե, յերկու տող ե մնացել, ես  
ա վերջացնում եմ:

—Յես ել հրես վերջացնում եմ,—լսվեց մյուս  
անկյունից Ատիկի ձայնը:

—Ե, հանաքի ժամանակ չե, —պնդում եր  
վարիչը:

Կոմսոմոլիստներն ուրախ ըրքիջով դուրս  
յեկան խրճիթից:

—Իսկի չեմ ուզում հորս յերեալին մտիկ  
անել. հրես, վոր տուն գնացի, ելի գորգուալու  
յե վրես, —գանգատվում եր Ատիկը:

—Ատիկ, յեկ, դու ել բատրակուհի դառ,  
հորդ մուննաթից դուրս կդամ..., —ասաց Պետիկը:

—Յես ել եղ եմ վորոշել, վրա բերեց Ա-  
տիկը...ել ուրիշ ճար չկա:

Ատիկը ներս մտավ տուն ու տեսավ հորը  
թախտի վրա ծալապատիկ նստած՝ չիբուխ ե  
քաշում: Նա աղջկան տեսնելուն պես աչքերը  
խոժուեց.

Հը...աղջիք, ես կես գիշերին վհը ջնանդամն  
ես կորել ջահել տղերանց հետ ընկել. բա դու  
նամուս չունես... Զե, ել ճար չկա, պիտի շուտ  
անեմ, մարդու տամ քեզ:

—Կոմսոմոլի ժողով եյի գնացել. հանգիստ  
պատասխանեց աղջիկը:

—Կոսոունը...Այս եղ կոսոմոլը քեզ թա-  
մուզ ձամփից հանել ա, —մրմուաց հերն ու չի-  
բուխի ծուխը պինդ փըսսացըեց.

—Ե՞ն, դու ել բան ես հասկանում ելի,  
դժոհնեց Ատիկը, —կոմսոմոլը մեր աչքը բաց ե  
անում:

— Թուրս, դուրս կորիր,— դոռաց հայրն ու բռունքը բարձրացնելով, տեղից վեր կացավ, վոր խփե աղջկան...

Ատիկը դուրս պրծավ ոթախից...

Շուշանենց դռանն Արփիկն ու Շուշանիկը զրուցում եյին:

— Մեր կնանիք ըմանչում են, դիտաս, ինչքան ժողովը արեցի, համա վոչինչ դուրս չեղավ... կնանիք ճնշվում են տղամարդկանցից:

— Դե, վոչինչ, կամաց-կամաց կսովորեն, վրա բերեց Արփիկը:

Ատիկը լաց լինելով ներս մտավ:

— Ահա տեսնում ես, Արփիկ ջան, սա ել առողում հոր ճնշումից դուրս գա. ամեն որ նրա զլխին թուք ու մուլ են թափում՝ թե ինչու յես կոմսոմոլի ժողովին գնում: Մի վախտ ել ինձ եյին ասում «աննամուս» ես, վոր ժողովի յես գնում: Միտք արեցի, միտք արեցի, վերջը վորոշեցի իմ ճամբաս դուզ ա, ի՞նչ ուզում են թող ասեն, դե, դյուզի խալխն ա ելի...

Արփիկը մոտեցա Ատիկին ու ձեռքը դնելով նրա ուսին հարցրեց.

— Եղ ի՞նչ կա, եղ ի՞նչ ա պատահել:

— Ներս վրաս բարկանում ա, ասումա, վոր կոմսոմոլ եմ զրվել, «աննամուս» եմ զառել ինչքան ասում, համոզում եմ, չի ուզում լսել Արփիկն Ատիկին թեանցուկ արավ, ներս տարավ:

— Յես կոմսոմոլից դուրս չեմ գա, հերիք ե ինչքան ճնշված մնացի, անդադար կրկնում եր Ատիկը՝ փարփելով Արփիկին:

IV

ԳՅՈՒՂՈՒՄ

— Ասում են քաղաքից մի աղջիկ ե յեկել մեր գյուղը, — Ասաց Սաբեթը կուժը լցնելով:

— Աղջի ճիշտ ես ասում:

— Դրուսա ա, դրուսա. գեղի նախագահը ճամփին ինձ տեսավ ու ասեց, վոր եսոր կանանց ժողով ա լինելու:

— Ես գիշեր նա Շուշանենց տանը զոնադ եր, մի ջանել աղջիկ ա, անունը Արփիկ, մեռածն ինչ լավ խոսում ա:

Իրիկնադեմին դպրոցի շենքում կնանիք ժողովի եյին հավաքվում: Արփիկը դպրոցի բակում մի քարի վրա նստած սպասում եր կանանց: Գյուղի կնանիք մեկ-մեկ, զանդաղ քայլերով հավաքվում են դպրոցի շենքը:

— Աղջի, Աշխեն, գնանք ժողովի, քաղաքից մի աղջիկ ա եկել, տեսնենք ի՞նչ ա ասում, մեզ համար ա յեկել, — կանչում եր Շուշանն իրենց հարեւան ջանել հարսին:

— Կարալ չեմ, բաջի, սկիսուրս թողում չի, պատասխանեց Աշխենը: Կանայք ըրջապատել եյին Արփիկին ու կարկտի նման իրար հետե-

վից հարցեր եյին տալիս... Արփիկը հանդիսա  
պատասխանում ու համոզում եր նրանց:

—Վ՞նց չե՛, կինն ի՞նչ կարա գեղ կառա-  
վարել: Վ՞ույ, քոռանամ յես, սա ի՞նչ բան ա,  
տղամարդկանց հետ կնիկարմատն ել գնա ժողո-  
վի. պնդում եր մի պառավ կին:

—Խի՞ չի կարա, հրես Շուշանը. դոչաղ ա,  
բոլորից ել լավ գործ ա անում, նրան կընտրենք  
գելեզատ (պատգամավորունի). ուժեղ պաշտպա-  
նում եր Սարեթը:

—Դու խի՞ քո հարսին թողում չես վոր ժո-  
ղովի գնա: —Ամոթ ա, վորդի, գյուղամիջին կխո-  
սան: Մեր ագաթն եղակես ա. տղամարդը վոր  
իմանա, թիքա-թիքա կանի, —դժկամած պատաս-  
խանեց պառավը՝ յաշակը բերանը քաշելով:

Վ

### ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՀԻՆ

Շաբաթ յերեկո յեր: Արեն արդեն մայր  
եր մտել Շուշանն շտապ շտապ գնում եր: Գե-  
ղացիք հանդից վերադարձել եյին, պատերի  
տակ ծալապատիկ նստել ու զրից եյին անում: Այնտեղ եր և Սաքո ապերը: Շուշանին տեսնե-  
լուն պես գլուխը դժգոհությամբ շարժեց...

—Եհանցած որեր... Առաջ ով կարար գեմա  
խոսեր, հիմի ես բալշեկությունը դիմին ել

ձայմիից հանել ա, կնանիքն ել ականջ չեն ա-  
նում. հրես, իմ «զախալա» հարսը, իր վոտնա-  
մանները կանցիլարի դռներին ա մաշում:

—Դրուստ ա, դրուստ, գլխով հավանու-  
թյուն եյին տալիս մնացածները:

—Շուշան բաջի, դե ուր ես շտապում, —  
կանգնեցրեց նրան Խեչոն:

—Եսոր խորհիղի ժողովա, պատասխանեցնա:

—Ելի ի՞նչ եք նստել եդ պատերի տակ, սը-  
րա նրա վրա բամբասանք անում, —վրա բերավ  
Շուշանը:

Դե, ի՞նչ անենք, պատասխանեց Խեչոն,  
մեզ ես ա մնացել, գործի գլուխ դուք՝ լաշա-  
կավորներդ եք անցել:

Ի՞նչ ա, հավան չեք, —ասաց Շուշանը յե-  
րեսը շուռ տալով:

Հազիվ յերկու քայլ եր արել, յերբ նրա  
թեկից մեկը պինդ բռնեց. Շուշանը վախեցած  
յետ նայեց: Վարսոն եր, աչքերը կարմրած, յե-  
րեսը կապտած:

—Աղջի, երեսդ ինչի՞ ա կապտել, մի ասա, —  
հարցը Շուշանը:

—Ել ի՞նչ պիտի լինի... Խեչոն յեկավ, ի-  
մացավ, վոր յես ժողովի յեմ գնացել, գորգո-  
ռաց վրաս, ծեծեց ու տանից դուրս արավ...  
Ախր ի՞նչ անեմ, ուր գնամ:

—Գնանք, գնանք տուն, —ասաց Շուշանը:

Յերբ Վարսոն Շուշանի հետ ներս մտավ,  
Խեչանը կատաղածի նման հարձակվեց ու են ա,  
ուզում եր խփել կնոջը, Շուշանը նրա կոռու  
պինդ բռնեց ու գոռաց վրան. «Եղ ով ե տփել  
քեզ եղ իրավունքը»:

—Կորի՞ր, ի՞նչ ես գալիս խալիսի կնանոցը  
խելքից հանում: Ո՞վ ե իրավունք տփել նրան՝  
ժողովի ա գնում, հլա թող ուրիշ տղամարդկանց  
հետ նստի զրից անի...

—Հա-հա-հա... վազուց են եղ ժամանակ-  
ներն անցել, վոր կնոջը ծեծես, զուրս անես  
տանից՝ թե նա ժողով ա գնում: Եզուց վոր քեզ  
դատարան քաշ տանք, են ժամանակ ել եղալես  
պիտի գորգոռաս,—հեգնական ժպիտով ասաց  
Շուշանն ու Վարսոյի հետ զուրս յեկան...

Խեշոն հետ հետ քաշվեց, ընկավ թախախ  
վրա, գլուխը դրեց բարձին ու թիկն ընկավ:  
Մեկ ել գլուխը բարձրացրեց, զգաց, վոր մենակ  
ե մնացել, դանդաղ քայլերով մոտեցավ, ոթախի  
դուռը բաց արեց ու տեսավ պառակ մայրը  
տնքտնքալեն յերեխանցն ա կերակրում: Յեր-  
կար կանգնեց ու մտիկ արավ, վերջը գլուխը  
թափ տալով մըմոաց:

—Ե՞ն, ես հին ոջախը քանդվելու ե ելի...

1925 թ. Խոկտեմբեր, Յերևան

## ՎՃՌԱԿԱՆ ՔԱՅԼ

I

Քաղաքը տանող ճանապարհի վրա յեր դըտ-  
նվում կոռպերատիվ խանութը: Կարմիր գույնի  
ներկված դռներով: Անշուք շենքի ճակատին ցու-  
ցանակը՝ «Յ. Գյուղի կոռպերատիվ խանութ»:

Գյուղացիները մի բանի կարիք վոր զգում  
ելին, կոռպերատիվը մոտ եր, վազ ելին տա-  
լիս խանութ:

Պարապ վախտ ել, գուան առջեկ քարերի  
վրա նստառում ու մալահաթ անում:

—Ի՞նձ մի գրվանքա շաքար կշռիր...,

—Ալեքսան ախակեր՝ մի հատ սպիչկա տուր:

—Աղ...,

—Աղը հատել ա:

—Յ մետր բյազ...,

—Համբերեցեք, մին-մին, հերթով ասեք, վոր  
կարենամ միաքս պահել: Իրար յետեկից վրա յեք  
տալիս, բան չեմ հասկանում:

—Ի՞նչ անեմ, Ալեքսան ախակեր, վասագ եմ:

Վարիչը զլուխը կորցրածի պես, մեքենայի  
արագությամբ, մի կողմից չեկն ե գրում, հե-  
տո կշռում, տալիս: Զոռ աշխատանք ե... կար-  
մըել, քրտնել եր նա:

Ու եղակես ամեն որ...  
—Հերթն իմն ա, հընկեր Ալեքսան, վոնց  
գունը նրա շաքարը կշռում:

Ա. Մանուկյան  
3293 84

— ԴԵ, հաշիվը մին ա ելի, — փնթփնթում՝  
եր Ալեքսանը:

Ու եսպես զյուղացիներից մեկը գուրս եր  
գալիս, մյուսը մանում:

Կոռպերատիվից քիչ ցածր գտնվում եր  
Սերգոյի փոքրիկ մանրախանութը: Նրա առե-  
տուրն զգալի չափով պակասել եր: Որեբով նրա  
խանութը մի զյուղացի ել ներս չեր մանում:  
Սերգոն զգում եր՝ յեթե մի քանի ժամանակ ել  
եսպես շարունակվի, խանութը կփակվի:

— Վ՞նց, յես թողամ, վոր կոռպերատիվն  
իմ տունը քանդի... հե... հե... ու դուն  
առջե նստում. յերբ մեկը գնած ապրանքը ձեռ-  
քին յերեսում եր, իսկույն տեղից նա վեր եր  
ցատկում ու ձեռքի շարժումով կանչում. «Մի-  
նո, յեկ եստեղ, տենամ ի՞նչ ես առել»:

— Զե, Սերգո ապեր, վոազ եմ:

— Զելավ, ինըն իրեն զլուխը թափ տալիս  
ու մրժմրժում եր Սերգոն. — Թե ապրանքս ե-  
ժանացնեմ, են ժամանակ հո վլաս կանեմ:

\* \*

Միտք եր անում, միտք:

— Լսիր, աղի զրվանքեն յես մի կոպեկ  
պակաս կծախեմ, են ել վնց աղ տամ:

— Դե, Սերգո, վ՞նց քեզ հավատամ, վոր  
դու ապրանքն եժան կտաս:

— Հավատա, վերջը դու կփոշմանես, — ասում  
եր Սերգոն ու խորամանկ ժպտում:

Ալեքսանը սովորություն ուներ, խանութը  
փակում ու գնում եր Սերգոյ մոտ մի յերկու  
թաս արագ կոնձելու:

Մի որ ել, Սերգոն առիթից ոգտվելով, վոր  
Ալեքսանի զլուխը քիչ արագից տաքացած ե,  
սկսեց նրան համոզել: Նա վաղուց ստածել եր:

— Դու յեկ հօժարվիր, վոր լավ ապրես,  
աշխարհք մի անգամ ես գալիս:

— Զե, չե, յես եղան բան չեմ անի, քա-  
ռասուն տարի յե ես աշխարհքի երեսին ապրում  
եմ, հալալ ճամբով եմ գնացել:

— Հա... հա... հա, ծիծակեց Սերգոն: — Մի  
հալալ հաց ել չես կերել, ստացածդ կոպեկները  
քթիցդ են դուրս հանում, — ու արագի թասը  
նա դատարկեց:

Ալեքսանը պապիրոսն եր վստացնում ու  
ինքն իրեն զլուխը կախած՝ մտածում:

— Այ մարդ, լսիր, — ասաց Սերգոն, ձեռքը  
գներով նրա ուսին, — վ՞նց ուղում ես արա, եղ  
քու գործն ե:

Ալեքսանը տատանվում եր, վերջը վեր կա-  
ցավ տեղից ու ձեռքը մեկնեց նրան.

— Հա, ախալեր ջան, համաձայն եմ, միայն  
ստացած ոգուար պետք ե կիսենք հավասար  
չափով:

— Տն, անաքանդ, եղան ե բա՛, — միամտաց-  
րեց նրան Սերգոն:

Սերգոն վերադարձավ տուն ինքնավստահ.

ներս մտնելուն պես հանեց վրայից արխալուղը, մեջքը թինկ տվեց բարձին ու ինքն իրեն մտածեց բարձր ձայնով. «Ալեքսանը հիմա իմ բռումն ա, վոնց ուղենամ, ընենց ել նրան ժաժ կտամ հա, հա, հա,—բարձր ձայնով ծիծաղեց:

—Այ մարդ, գժվել ես, ի՞նչ ա, դու քեզ ու քեզ ծիծաղում ես,—ասաց զարմացած նրա կինը. Մարդն ուշք չդարձնելով կնոջ խոսքերի վրա, շարունակեց, ինքն իրեն խոսել, հաշիմներ տեսնել, մինչև վոր քունը յեկալ ու հաղթեց նրան:

II

Սիրուշը պատգամավորուհի յեր: Կիս բաժինը նրան ուղարկել եր կոոպերատիվ, վորպես պլակտիկանուկա աշխատելու:

Ամեն որ մայրը նրա հետ կովում եր.

—Դու ջանել, հասած աղջիկ ես, ի՞նչ ես ամեն որ գնում ցցվում եղ կոոպերատի խանութը. գնացող-յեկողը դիմ քեզ են մտիկ տալիս:

Սիրուշը համառում ու շարունակում եր աշխատել կոոպերատիվում:

Նա արդեն սովորել եր կշռել. ամեն անգամ, յերբ վարիչը զբաղված եր լինում, Սիրուշին եյին դիմում հաճախորդները:

Այսպես Սիրուշը յերկու ամիս եր, ի՞նչ աշխատում եր:

Ամեն առավոտ նա յերբ գալիս եր խա-

նութ, սովորություն ուներ գարակների փոշին սրբելու:

Մի որ ել, յերբ նա առավոտ շուտ եր յեկել խանութ, գարակները մաքրելիս, հանկարծ նրա աչքով լինկավ, վոր յերեկվա ստացած շաքարը կիսված է. Սկսեց նա խանութի բոլոր անկյունները ման գալ, կարծելով թե վարիչը մի գուցե կիսել, առանձին-առանձին տեղ ե գրել:

—Ուր ե, չկա, չինի գող ե մտել. բայց դուն կողպեքը ստղ եր: Այսպես, ինքն իրեն մտմառմ եր նա, յերբ մեկը ներս մտնելով դիմեց նրան.

—Սիրուշ, մի զրվանքա նավթ քաշիր: Սիրուշը, մոտենալով նավթի ամանին, տեսավ գտարկ ե: Զարմացած հարցը եց:

—Էնկեր Սլեքսան, նավթը հատել ա....

—Այո, ինչո՞ւ յես զարմանում, —ու նորից շարունակեց գրել:

Սիրուշը կակածանքով նայեց վարիչին, բայց վաշինչ չսասաց: Նրա հայացը Ալեքսանին շփոթեցը եց: Նա մինչև ականջները կարմրեց:

Ամբողջ գիշերն Ալեքսանի քունը չեր տանում: Նա զգում եր, վոր իրենց գողությունը կարող ե բացվել: Անհանգիստ շուռ ու մուռ եր գալիս անկողնում: Նրա կասկածը Սիրուշի վրա յեր... հանկարծ նրա մեջ հղացավ մի միտք՝ կրծատել Սիրուշին, հեռացնել խանութից և ել ուրիշ աչք չկա տեսնելու:

Մեկ ել նրա ականջին հասավ դիմացի թաղթի վրա պառկած Համոյի խոպոցը:

Հայրը թեքվեց... «Ի՞նչ կասե նա»։ բայց չէ վոր նրա համար եմ անում, վոր լավ ապրի... նրան թփաց, վոր ահա Համոն վեր կացավ անկուղոց, մոտեցավ իրեն և աղերսում ե. — հայրիկ ի՞նչ ես անում, պատիվս վոտքի տակ ես գցում, ձեռք քաշիր։ Զդայնաբար նա իսկուն յերեսը շուռ տվեց պատին ու վերմակը քաշեց գլխին։

Անցել եր մի քանի որ...։

— Դու գիտես, Սիրուշ, վոր Յերեանից հրահանգ ե յեկել պրակտիկանտիային կրճատել։ Քեզ ամսի մեկից կրճատում եմ, — ասաց վարիչը ու քթի տակ խորամանկ ժամաց։

Կարծես մուրճի հարվածներ լինեյին նրա այդ խոսքերը, վոր իջան Սիրուշի գլխին։

Նա աղջած՝ տեղնուտեղը մնաց և կարողացավ միայն անկապ-անկապ բառեր ասել իրար յետեից — Ինչպես... մում... ինչու համար...։

Ալեքսանն զգալով իր խոսքերի զորությունը, ինքն իրեն մտածեց, — քո կարճ կնկա խելքով, ուզում եյիր իմ ճամբիս վրա քար դնել։

Սիրուշը մեխվածի նման չեր հեռացնում իր հայացքը վարիչից։

III

Ամեն որ խանութը փակելուց հետո, յերբ

բոլորովին մթնում եր, Ալեքսանը ծածկուկ նուրից յետ եր գալիս ու դարբասի մոտ մի անկյունում սպասում Սերգոյին։

Այն ժամանակ, յերբ գյուղը քուն եր մըտնում, ճրագը խանութում պլաղում եր, իսկ գըրսից դուռը փականը ուղարկած եր լինում։

— Դրսում ի՞նչ վոր ստվեր ե շարժվում, կմկմաց Ալեքսանը վախից թուքը նրա բերանումը չորացել եր։

— Եուս..., — կամաց ու թաթերի վրա մոտենալով դռանը, Սերգոն սկսեց ուշի-ուշով ականջ դնել։

Դուրսը մութն եր, վոչինչ չեր կարելի նըշմարել...։

— Ե՛, վոչինչ չկա, միամտացը նա։

Ալեքսանը մեշոքով շաքարը կիսեց. — ՊԵ՛, ես նավթը դու վերցրու, իսկ շաքարը յես կառնեմ, — ասաց նա ու ճրագը հանգցրեց և յերկուսով դուրս յեկան դռան լայն ճեղքվածքից՝ կողպեքը բաց անելով։

Գիշերվա մթության մեջ, յերկու ստվերներ գաղտագողի շարժվում եյին... մեկի կոնակին կես մեշոք շաքար, մյուսի ճեսին մի փթի չափ նավթ։

Ու եղան ամեն անգամ, յերբ կոռպերատիվը նոր ապրանք եր ստանում։

— Մի կես ֆունտ շաքար քաշիր, — ասաց Սանուկը ներս մտնելով։

— Շաքարը հատել ա, — պատասխանեց Ալեք-  
սանը...:

Մանուկը սուս ու փուս գուշը յեկավ ու  
քայլերն ուղղեց դեպի Սերգոյի խանութը:

— Շաքմար, հրես քե մատաղ, յերեկ եմ  
ստացել, իբար հետեկից վրա յեր տալիս Սերգոն  
ու խորամանկ ժամանեմ:

— Հա...հա...հա սպասեցեք, հլա վոնց եմ  
վնասը ձեր ջանից հանելու, — եսպես ուշունց եր  
տալիս նրանց յետեկից Սերգոն:

— Եսպես բան կլի, կոռպերատում ապրան-  
քը հատել ա, քաղաքից նոր ապրանքը հլա չեն  
բերել, — դժոնում եյին գրուզացիները:

— Ես ա Սերգոյի խանութը, ելինչ ես կոռ-  
պերատիվի պոչիցը կախ ընկնել... նա ել մեր գե-  
ղացին ա:

— Են տնաքանդն ել, ենքան թանգ ա ծա-  
խում, վոր մեր ուժից վեր ա .., — վրաբերեց մեկ  
ուրիշը:

— Դե, կոռպերատը ենքան լավ ե, մեր ճրա-  
գին նովիթ ե տալես:

#### IV

Հետեւյալառավոտ Սիրուշը յեկավ, տեսավ՝ իր  
գրած նշանի հետքն անգամ չի մնացեք... Յերսորդ  
որը նույնը կրկնվեց...: Սիրուշի կասկածներն Ալեք-  
սանի վրա քանի գնում, սաստկանում եյին:

— Եղուց ել վոր ինձ կրճատում ա, մի  
դնամ և Գևոյի հետ խոսամ եղ մասին, նա խե-  
լոք տղա ա:

Այդպես ել արավ:

Խանութը փակելուց հետո, վագեց խրճիթ-  
ընթերցարան: Այստեղ բաղխմբակի պարապ-  
մունքն եր: Այդտեղ եյին Գևոն և Համոն, նըս-  
տած առաջին շարքում:

Պատից կախված փոքրիկ լամպան աղոտ լույս-  
եր տարածել իր շուրջը և այդ լույսի տակ հայ-  
զիկ կարելի յեր նշանաբել էենինի մեծաղիք-  
նկարը:

Սիրուշը նստած թեկ լսում եր, բայց վո-  
չինչ չեր հասկանում: Նրա մաքերը պտտվում  
եյին կոռպերատիվի շուրջը:

Պարապմունքը վերջացավ. աղմուկ, իրա-  
րանցում, ծիծագ, քրքիջ... իրար հրելով գուրռ-  
եյին գնում կոմսոմոլիսաները, կամաց կամաց  
խրճիթը դատարկվում եր... յերկու յերեք հոգի-  
միայն նստոտեցին սեղանի շուրջը թերթ կար-  
դալու:

Սիրուշը Գևոյի հետ առանձնացավ մի ան-  
կյուն:

— Եստեղ լավ ե, մեզ վոչ վոք չի խանգարի:

— Հը, Սիրուշ, ինչ ե, ինչու յես նոթերդ-  
կիտել, շինը հորդ հետ ելի կոիվ ես արել, ա-  
սաց կատակելով Գևոն:

— Գևո, կատակի վախտ չե... լսիր, բարկա-  
ցավ նա ընկերոջ վրա:

— Դե, ասա, լսում եմ:

— Դու պիտի ինձ ոգնես, — սկսեց նա դող-

դոջուն ձայնով, հազիվ հաղ ներքին հուզմունքը  
հաղթահարելով:

—Ի՞նչ,—արդեն վախեցած հարցրեց Գևոն և  
վայրկենապես կասկածն ընկավ մեջը. չինչ հայ-  
քը նկատել ե ու... բայց Սիրուշի խոսքերը  
ցրեցին նրա բոլոր կասկածները:

—Ուրեմն դորթ ես տոււմ....

ԶԻ, չե, եղ սուտ ե... Համոյի հայրը... ինքն  
իրեն մտածում եր Գևոն ու ջղայնացած ճակա-  
տից գանգուր մազրել յետ տանում:

—Ի՞նչ անեմ, Համոն իմ ընկերն ա, բայց  
պիտի բաց անել ամեն բան,—կտրուկ և վճռա-  
կան ասաց: Սիրուշը և ուղիղ Գևոյի աչքերին  
նայեց: Գևոն գլուխը թեքեց կրծքին:

Խրճիթն արդեն դատարկվել եր... ճրագը  
հանգչելու վրա յեր: Վարիչը մոտենալով նրանց,  
հիշեցրեց, վոր ժամանակ ե տուն գնալու:

Վ

Վերջին ժամանակներն Ալեքսանը շատ  
լրակյաց եր դառել, տանեցիք վաղուց նկատել  
եյին, վոր նա մի ինչ վոր բանով մտահոգված  
ե... հաճախ պատահում եր, վոր դիշերները շատ  
ուշ եր տուն դալիս: Համոյի մեջ սկսել եր վո-  
րոշ կասկածներ զարթնել հոր նկատմամբ— չինչ  
կոռպերատիվի հաշիմսերը ճիշտ չեն, — մտածում եր  
նա ինքն իրեն: Մի բան, վոր ափաշկարա յե-  
րմում եր, դա կոռպերատիվի առևտրի սվազելն

եր, վորի համար հայրը տանը գանգատվում եր:  
Լինում եյին որեր, յերբ Ալեքսանը ժամերով  
պարապ նստում եր, վոչ մի գյուղացի ներս  
չեր մտնում կոռպերատիվ:

—Դե, կոռպերատում ի՞նչ ապրանք կա,  
ասում եյին գյուղացիները:

—Եղքան ապրանքը յերբ ծախեցին: Վատ-  
կարծիք եմ տանում Ալեքսանի վրա: Ոյին ե խա-  
ղացել մեր կոռպերատի գլխին,— ասում եր Սի-  
նոն ու խեթ-խեթ նայում:

—Տո, են Ալեքսանն ենպես ճարպիկ ա,  
վոր ջրի, կրակի միջից ել անվաս դուրս կգա, —  
վրա բերեց մեկ ուրիշը,

եսպես լուրեր ամեն որ պտտվում եյին  
գյուղամեջը բերնե-բերան ու հասնում Հա-  
մոյի ականջին.

Շաբաթ որ եր. Համոն ոգտվելով առիթից,  
վոր հերն եսոր շուտ ե տուն յեկել, վորոշեց  
նրա հետ խոսել ու պարզել են կնճոռտ հարցը,  
վոր իրեն մտատանջում եր:

—Հայրիկ, լսել ես, գյուղամեջն ի՞նչ են  
ասում քո մասին, — հարցրեց տղան, մաիկ տա-  
լով հորը:

—Ի՞նչ, զարմացավ Ալեքսանը, իբր վոչնչից  
տեղյակ չե ու սկսեց պապիրոսի ծուխը քուլա-  
քուլա բաց թողնել բերանից:

Մայրամ բաջին, վոր ժախթի վրա նստած

թեշի յեր մանում, տղի խոսքերի վրա՝ կառ-  
կածանքով նայեց ամուսնուն, ծանր ու գանդաղ.

— Դե, անմեղ մարդու վրա չեն կարա բան  
ասել. Ալեքսանը թարս-թարս մտիկ տվեց կնոջն  
ու բարկացկոտ. «Եյ կնիկ, ի՞նչ ես նստել խել-  
քիդ զոռ տալիս»:

— Ճիշտ ե,— ասաց Համոն, — վերջին որերս  
շատ են խոսում, հլբաթ մի բան կա:

Հայրը փորդու կասկածները փարատելու  
համար, ավելի մեղմ.

— Համն, զու իմ վորդին ես չե...ով ել վոր  
հորդ բամբասե, զու նրանց բերանը սլիտի ճոր-  
թես:

Ես խոսակցության ժամանակ դուռը յեր-  
կու անգամ թակեցին: Մայրամ բաջին վեր կա-  
ցավ տեղից ու դուռը բաց արեց: Ներս մտավ  
Գեռն, տեսնելով թախթի վրա նստած Ալեքսա-  
նին, մի վայրկյան շփոթվեց, դիմեց Համոյին.

— Համո, արի դուրս, քեզ խոսք ունեմ ա-  
սելու: Համոն նկատեց, վոր ընկերն այլայլ-  
ված ե, անմիջապես տեղից վեր կացավ ու  
դուրս դնաց նրա հետ:

Մութ դիշեր եր....

Յերկու ընկերները թևանցուկ, արագ ա-  
րագ գնացին մինչև գետափը:

— Ի՞նչ կա Գեռ, զու դողում ես,— տարա-  
կուսեց ընկերը:

— Համո, զու ուզում ես, վոր մեր կոռակե-  
րատն ապրի, — շուրթերը դողում եյին:

— Ի՞նչ ես ասում, տո, նեղացավ Համոն:

— Մի նեղանա, Համո ջան, զու կոմսումը  
ես, ինչ կանեցիր, թե ճանչեցիր են մարդուն,  
վոր թալանում է կոռակերատը:

— Գեն, կշտամբեց ընկերը:

— Դե լավ, կարճ կարեմ .. զու պիտես չե՞,  
վոր մեր կոռակերատը թալանում են, եղ դողը  
իրեն միջից ե:

— Զլինի՞ հորս վրա կասկած ես տանում,  
դուրս թռակ Համոյի բերանից:

— Եյն:

Ի՞նչ ասացի՞ր, — ճշաց Համոն շանթահար-  
յեղածի պես. սխալ ե...ով ե հնարել... Միրուշը  
համ...

— Համն, զգույշ Միրուշի մասին: Նա ազ-  
նիվ աղջիկ ա, նա յա բաց արել ես դիփիս աշ-  
քերը: Հիմի հերդ ուզում ա նրան կրծատել, վոր  
ծածկի իր դողությունը... լուցի՞ր, վրա բերեց  
Գեռն ու ձեռքը դրեց նրա ուսին:

Համեն ուժեղ թափով նրա ձեռքն են կողմը  
հերեւի.

— Կորիր, ստախոս, են աղջկա փեշերից  
կախ ես ընկել ու հորս բամբատում:

Գեռն բանելով նրա ձեռքը, հանգիստ կեր-  
պով:

— Ապասիր, զուր մի տաքանա, յես իմ  
աչքովս տեսա և ապշեցի:  
— Վորտեղ, ինչպես...:  
Յերեկ չե, մեկել որը...:  
— Հերիք ե, հերիք ե, ել չեմ ուզում  
լսել, ընդհատեց ընկերով չամոն ու ամոթից  
յերեսը ձեռներով ծածկեց:  
Նա տուն վերադարձավ բավականին հուզ-  
ված: Ասիթ եր վհատում, վոր սրտի թույնը  
թափի հոր գլխին:  
— Բայց վոչ, սուս անեմ, տեսամ իմ աչ-  
քովս,—մտածում եր նա ինքն իրեն:  
Բարկությունից նա տեղի անտեղի գորդո-  
ում եր, մոր և փոքր յեղբոր վրա:  
— Այ տղա, ի՞նչ ե պատահել, նոթերդ կի-  
տել ես,—հարցնում ե անհանգիստ Մայրամ բա-  
ջին: Համոն վոչինչ չեր պատասխանում:  
Որորի վրա նա նիհարում եր, ինքն իր մեջ  
խորասուզված՝ վոչ վորի հետ չեր խոսում: Նրան  
թվում եր, թե ամբողջ գյուղը, ընկերներն ի-  
րեն նախատինք են տալիս:  
— Հերդ գող ե, գողացած փողով ես հաց  
ուտում:  
— Զուր չեյին եղ լուրերը գյուղամեջ  
պատվում, —մտածում եր Համոն ինքն իրեն:  
— Համո, ես քանի որ ա, ի՞նչ ա խրճիթ-  
ընթերցարան չես գալիս, —հարցնում եյին ըն-  
կերները:

— Հիվանդ եմ, գլուխս շատ փիս ցավում  
ա,—ասում եր նա ու կարմրում:  
— Սուտ ես ասում, Աիրուշից չես կարա-  
բաժանվել, —կատակում եյին ընկերները:  
VI  
— Վոնց վոր լինի, եղ նոր ստացած ապ-  
րանքի կեսը իմ խանութը պետք ե տեղափո-  
խենք, —հրճվանքով ասում եր Սերգոն...  
Ալեքսանը զլուխը թափ տալով:  
— Հարկավոր ե քիչ սպասել, կասկածներ,  
կան դյուղում:  
— Ե՛, —ձեռքը թափ տալով ասաց Սերգոն, —  
ականջ մի դիր, վոչինչ ել չեն կարա անել:  
Ալեքսանը տատանվում եր...:  
— Կարան համաձայն չել, բոլոր հաշիվներն  
իմ ձեռքում են, մի ծպտուն հանես, կորած ես-  
դու, եղ լավ իմացիր, —սպառնալիք եր տալիս  
Սերգոն:  
Ալեքսանը համաձայնեց...ու յերկուսով  
դուրս յեկան մի-մի կապոց կոների տակին  
բնած:  
— Եստեղ մութն ե, մի սպիչկա կպցրու:  
— Չե, պետք չե, ձեռքդ տուր, —ասաց Ալեք-  
սանն ու զլուխը կախելով առաջ անցավ:  
Սերգոն և Ալեքսանը գնում եյին լուռան-  
խնս...մերթ ընդ մերթ չորս կողմը մտիկ տալիս.  
Գյուղի վոչ մի խրճիթում լրւյս չեր յերկում:

Յերկու բայլ եր մնացել, վոր հասնեցին խանութը, յերբ հանկարծ յերկու հողի կանգնեցին նրանց դիմաց.

— Կանգնեցէք, — վրա տվին Համոն և Դեռն, ատրճանակները ձեռքներին բոնած:

Գողերը փորձ արին փախչել, բայց անողուտ, արդեն շրջապատված եյին:

— Հայրիկ, ճշաց Համոն:

Ալեքսանն այլայլվեց, ձեռքի կապոցը ցածքեց ու սարսափած. «Դու, Համո, ատրճանակ, հորդ վրա՞»:

\* \*

Հետեյալ առավոտ, վող գյուղն արդեն իմացել եր Ալեքսանի և Սերգոյի բանտարկությունը: Այդ բանը գյուղի համար արտասովոր իրողություն եր:

Սերգոյի և կոռապերատիվի խանութը կնքված եյին: Կատարվում եր քննություն:

— Հախն ա, Ալեքսանն իր պատիվը, նամուսը վոտի տակ եր առել, — հրձվանքով խոսում եյին գյուղացիները միմյանց հետ:

— Վալա, կեցցէ Համոն, զոչաղ տղա:

Գյուղացիները մեկ-մեկ Սերգոյի խանութի մոտով անց կենալիս խեթ-խեթ նայում եյին:

— Հախն ա, տեսար վոնց ծակը կոխեցին:

Շրջանի կենարունում նոյեմբերի 25-ին նշանակված եր Ալեքսանի և Սերգոյի դատը:

Հարևան մոտակա գյուղերից ահագին բազմություն եր հավաքվել:

Որը կիբակի յեր...

Ակումբի դահլիճը լեփ-լեցուն եր... շարժվեու տեղ չկար: Մի ահագին բազմություն ել դուրս եր մնացել:

Շատ-շատերն առավոտ վաղ յեկել, տեղ եյին գրավել: Վոչ-վոք չեր ուզում տեղից շարժել:

Դահլիճն ամբողջ ծխով լեցված...

— Ընկերներ, եստեղ չի կարելի ծխել, — սրան նրան նկատողություն եր անում միլիցիոները:

— Մուս... Սկսում ե:

— Դատական նիստը հայտարարում եմ բացված, — լսկեց բեմից նախագահի ձայնը:

Մի անկյունում նստած եյին Ալեքսանն ու Սերգոն:

Ալեքսանը գլուխը քաշ արած, չեր վստահանում ամոթից աշքերը վեր բարձրացնել: Սերգոն ավելի հանգիստ եր պահում իրեն:

— Վկաներ, — Համո, Գեռ, Միրուշ, — խընդրում եմ թողնել սրահը:

Նրանք թողեցին սրահը

— Մեղաղըյալ Ալեքսան թ..., դուք ձեզ մեղավոր ճանաշնում եք... հարցըց նախագահը:

Ալեքսանը զանգաղ տեղից վեր կացավ, ցածը ձայնով կմկմաց՝ և այս, և վոչ...:

Մեղադրյալ Ալեքսան, յերկմիտ պատասխաններ չի կարելի տալ,—ընդհատեց նրան դատավորը:

—Յես...յես...դողդոջուն և վարանոտ՝ նորից սկսեց Ալեքսանը.—մեղավոր չեմ, ինձ սայե մոլորեցրել...,—ցույց տալով Սերգոյին:

—Վոչ, ստում ե,-տեղից գոռաց Սերգոն:—Լավ նստեցէք:

—Նա, ինքն առաջարկեց...ամեն որ գանգատ եր անում, վոր ոռճիկը հերիք չի անում,—շարունակեց Սերգոն խեթ-խեթ նայելով Ալեքսանի կողմը:

—Ինչը ան ոռճիկ եք ստանում,—նորից հարց տվեց Ալեքսանին նախագահը:

—Ցոթանասուն ոռւբլի:

—Քանի հոգի յեն ձեր խնամքի տակ:

«Իմ, իմ,—կմկմաց Ալեքսանը,—յերկու հոգի, կինս, փոքր փորդիս...իսկ մեծը...,—յերկարացրեց նա ու ձայնը խեղդվեց կոկորդում:

—Ներս կանչել Համոյին:

Յեկավ Համոն չարացած դեմքով: Նա այդ դեպքից հետո փոխվել եր: Ծանր ապրումներից ավելի գունատվել, նիհարել եր: Հայրը զլուխը բարձրացրեց ու նայեց ուղիղ փորդու աչքերին... ավելի զլուխը կախեց: Այդ վայրեցանին, նա այնքան անոգնական և խղճալի թվաց. մի ըոսկե-

վորդին զգաց, վոր այդ մարդն իրեն հայրն ե, իսկ ինքը...ցնցվեց և վերհիշեց բոլորը... լսվեց նախագահի ձայնը:

—Մեղադրյալ Ալեքսանի հետ ի՞նչ բարեկամական կապեր ունեք:

—Նա...նա...իմ հայրն եր,—ասաց Համոն, նրա ձայնը հուզմունքից դողում եր.—իսկ հիմի...վոչ...,—դուրս թռավ նրա բերանից:

Հանկարծ հանդիսականների միջից մի ճիչ լսվեց. դա Մայրամ բաջին եր. «Համն, ի՞նչ ես ասում»:

Ամբողջ սրահը կարծես քարացավ, շամեց Համոյի այդ անսպասելի պատասխանից:

Ինքը՝ Համոն չգիտեր՝ ի՞նչ ե կատարվում իրեն հետ: Ինքն ել չզգաց՝ ինչպես ելավ եդ բոլորը,

Նրան թվում եր, թե պատերը շուռ են դաւախու և բազմաթիվ աչքերի միջից մի զույգ աչքեր նրանից աղերսում են նոր պատասխան:

—Վորդիս...հեկեկաց հայրը,—չե՞ վոր յես քեզ կյանք եմ տվել, խնայիր....

—Կոռպերատիվի թշնամին պետք ե խորհրդային որենքների համաձայն ստանա իր պատիժը...վերջացրեց իր խոսքը հասարակական մեղադրողը:

—Հինգ տարի ազատազրկման ե դատա-

պարտվում, — հայտարարեց նախագահը ծափելու տարափի տակ:

Այս ժամանակ, յերբ յերկու միլիոններ մոտեցան և Աղեքսանին կալանքի տակ վերցրին, նա ձեռքով պինդ զինին խփեց:

— Յեսուսի ակնավոր եմ:

Արցունքի յերկու խոշոր կաթիւներ գլուխ վեցին նրա աչքերից:

1926 p.





ԳԻՆԸ 12 ԿՈՊ.